

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

1910-11 քաղաքացիական, մի տարի, ինձ վիճակեց բացառիկ բախտ՝ գրեթե մի յարկի տակ ապրելու Ռոստոմի հետ։ Նա Կարևում դպրոցական ընդհանուր տեսուչ էր եւ Հ. Յ. Դ. Բիւրօի Հայաստանի հատուածի ներկայացուցիչը, բժ. Յ. Տէր-Դաւթեանի հետ։ Երբեմն Մշից գալիս էր բժ. Յ. Զարեանը եւ քաղաքի երկար մընում մեզ մօտ։ Ռոստոմը, բժ. Յ. Տէր-Դաւթեանը, բժ. Յ. Զարեանը, օր. Սաք. Պարտիզյանեանը (այժմ Տիկ. Տէր-Դաւթեան), Փիլոսը եւ ես մի դաշնակցական ընտանիք էինք կազմում՝ համերաշխ ու մտերիմ։ Այդտեղից սկսած մտերմութիւնը Ռոստոմի հետ մնաց անաղարտ մինչեւ վերջ։

1911 թ. աշնանը, Ռոստոմի կարգադրութեամբ, ես մեկնեցի Ամերիկա ստանձնելու համար «Հայրենիք»-ի խմբագրութիւնը։ Այնուհետեւ Ռոստոմից ստացել եմ բազմաթիւ նամակներ, որոնց մի փոքր մասը — չգիտեմ ինչ հրաշքով — մնացել է անկորուստ։ Ես կտրծում եմ օգտակար կը լինի հրատարակութեան տալ այդ նամակները։ Նրանք համարեա ամբողջապէս նւիրած են հանրային խնդիրների եւ թէ որպէս պատմական ընդհանուր նիւթ, թէ Ռոստոմի կենսագրութեան տեսակէտից անպայման արժէք են ներկայացնում։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

I

22)1, 1912

Սիրելի Վրացեան,

Երևի ստացած կը լինես մեր հաւաքական ստորագրութեամբ Carte - postale-ը, որ պիտի ուղարկէր քեզ Շաւարշը՝) անցեալ փոստով։

Բո բոլոր նամակները ստացել եմ ժամանակին։

Նախ քան սրտառախան զրեւս չմոռնամ հարցնել քեզ, թէ ի՞նչ

եղան Պարսկ. մասին տեղեկագիրները: Ափսոս էն, վախենում եմ կորչին:

Տխուր եղաւ մեր գործունէութեան ֆինալը. այսօր այստեղ հասան մի քանի հոգի մուշալիդներէից, որ անցել են Բաշկալէի վրայով: Դուժմանը, Սամսոն խանը նոյնպէս անցել են: Նրանց հետ են մօտ 35 հայ մարտիկներ: Կուրն սաշտօնապէս չեն մասնակցել Թեհրանից (Եփրեմից) եկած հրահանգի համաձայն: Բայց այդ հրահանգը դուրսէ կարեւորութիւն չունենար, եթէ չլինէր այն վախը, որ դալիք դժբախտութեան պատճառը կարող էին համարել հայ մարտիկներին մասնակցութիւնը: Թէ ուստի կառավարութիւնը եւ թէ մօլլաները կարող էին իրենց ձեռքին լաւ զէնք ունենալ հակահայկական հոսանք ստեղծելու համար:

Այս երեկոյ նորից պիտի տեսնենք. հրաւիրեցի մեր «տունը»: Մէջները կան հին զինակիցներից մի-երկու հոգի:

Ձեռնարկել ենք ընտրական նախապատրաստական ժողովներէ: Ուղղում ենք վերընտրել տալ նախկիններին: Հեռագրել ենք, որ Վարդգէսը եւ Գարօն չուտով մեր կողմերը անցնին: Ինչ որ թուութիւն է նկատուում առհասարակ ամէն տեղ: Թիւրքերի մէջ պատրաստուում են Իթիլաֆը կազմելու: Ինչպէս երեւում է, հայերից մի քանիսը մտնելու են, հաւանական է դադանի, նրա մէջ: Թէեւ պէտք է ասած, որ հակառակորդ մասի տրամադրութիւնն է ձայն տալ Դաշնակցութեան թեկնածուներին: Քաղաքական ժողովը արդէն այդ տեսակ որոշում տւել է:

Լուսկեվիչից²⁾ ստացայ նամակ: Ուղարկել էր եւ հրատարակութիւններ: Կը կանոնաւորենք:

Եթէ սպորտը որոշ տեղ է բռնում մեր ընկերների զբաղմունքների մէջ – այդ բանին ես շատ ուրախ եմ: Կառաջարկէի որ մի քանի հոգի յատկապէս աէրօպլանով տարւէին,³⁾ ոչ թէ սխտեմների վրայ աշխատէին, այլ արդէն դոյութիւն ունեցողների վրայ, վարժւէին թռչելու: Մի քանի աէրօնաւտները ժամանակին մեծ ծառայութիւն կարող են մատուցանել: Ընդհանուր ժողովի ժամանակ ուղում էի այդ հարցը դնել, որ մի քանիսը լաւ ուսումնասիրէին անթիւ հեռագրի գործը:

Սպասում ենք Կարնոյ⁴⁾ ուսումնասիրացի կազմւելուն: Պատրաստի 150 դոլարից 50-60 դոլար փոխադրեցէք մեզ – արդէն մօտաւորապէս այդքան գումարի պատուէր եմ ուղարկել Թիֆլիզ՝ գործիքներ եւ նիւթեր բերել տալու համար: Դա կը լինի սկիզբը մեր քիմիական լաբօրատորիայի: Մնացած 100 դոլարով ուղարկէք մեզ համար գործիքներ ֆիզիքական կարենէտի համար: Փափաքելի է, որ թէ

Ֆիզիք. կաբինէն եւ թէ քիմ. լաբորատորիան կազմելու ամբողջ ծախքը իրենց վրայ առնէին ամերիկացիք: Ներփակ կը դնեմ ամենահրաժեշտ գործիքները ցանկը: Իայց աւելի լաւ կը լինէր այդ 150 դոլարը ամբողջովին մեզ ուղարկէին, ապսպրանքը թիֆլիզում անէինք, իսկ ապագային մեծ ապսպրանքը կը թողնենք ձեզ:

Դպրոցը⁵⁾ այս տարի շատ լաւ ուսուցչական կազմ ունի. Խոսրովը, Ղոյնեանը, Սերովբէն, Արսէն Աւետիքեանը, Տէրտէրեանը, ԲԺ. Սէյիսեանը դասախօսում են կամ ձմեռը, կամ չնչին վարձատրութեամբ: Վերջերս էլ Սիմօն Աղապալեանին քաջեցինք: Յոյս ունենք հրաւիրել նաեւ երկու նոր համալսարանական ուսէր: Ռուբէնը⁶⁾ եւ ուսնդով է աշխատում: Դրա հակառակ Սանաւարեանը տակն ու վրայ է լինում:

Սասունի բացառիկ թւի համար մի բան կուղարկեմ. չգիտեմ, թի, երբ պիտի լոյս տեսնի այդ թիւը:

Ուրիշ մի քանի բաների մասին էլ պիտի գրէի, բայց մնաց. եթէ անցնեմ երկրորդ թերթի, չուտով չեմ վերջացնիլ: Սրտագին բարեւներս քեզ, Նարինեանին, պատգամաւոր ընկերոջ եւ միւս ծանօթներին:

Սաթենիկից շատ բարեւներ:

ՌՈՍՏՈՄ.

1) Շուարշ Միսաբեան, որ «Յառաջ»-ի խմբագիր էր կարնում: 2) Վ. Լուկեիւիչ - Արարատսկի - Սոց.- յեղափոխական կուսակցութեան ներկայացուցիչը փարիզում, կարնից Ամերիկա անցնելիս, Ռոստոմի յանձնարարութեամբ, ես պայմանաւորել էի Լուկեիւիչի հետ, որ կովկասեան սանձաւանով սոց.-յեղափոխական գրականութիւն փոխադրեմք դէպի Ռոսաստան: 3) Ռոստոմը, իբրեւ յեղափոխական գործի մարդ, շատ մտահոգւած էր մասնագէտների պատրաստութեամբ եւ երբ դեռ օգնագնացութիւնը նախնական վիճակում էր գտնուում, արդէն ուշադրութիւն դարձրել էր սաւառնակների կարեւորութեան վրա, ինչպէս եւ անքել հեռագրի: Յաճախ խօսում էր անքելի եւ սաւառնակի վարիչներ պատրաստելու մասին: Եւ նրա այս խօսքերը յաճախ սրախօսութեան առարկայ էին կազմում ընկերների կողմից: 4) Խօսքը Ամերիկայի կարնոյ Հայրենակցականի մասին է, որ կազմեց 1911 թ.: 5) Հոփսիսիւմեան Օրինորդաց վարժարանը, որի հետ մեծ յոյսեր էր կապում Ռոստոմը: 6) Ռուբէն Քաջբերումի:

Ս. Վ.

II

11)4,1912

Սիրելի Վրացեան,

Պարսկաստանի տեղեկագրերը, ինչպէս նաեւ Դրօշակի հաւաքածուն վերջերի Ումիկեանների մօտից: Բոլորովին մոռացել էի:

Ինչպէս արդէն տեղեկացած կը լինես, գործերն այստեղ շատ խառնուեցին: Սանասարեանի խնդրին յաջորդեց առաջնորդինը (հակառակ իմ ջանքերին)․ սրան էլ կը հետեւի ազգային դպրոցների խնդիրը: Երեւի մի կերպ գուրս կը դանք այս խառնաշփոթ վիճակից: Հակառակորդները, չնայած իրենց փոքրամասնութեան, աւելի յաջողութիւն են գտնելու, քան սպասուած է․ գործնական մարդիկ են․ գիտեն օգտուել ըստէից:

Շատ ուրախ եմ, որ Կարնոյ ուսումնասիրացը յաջողուել է: Նըպաստը շատ տեղին պիտի հասնի, որովհետեւ մօտ 200 ոսկու բացը ծածկելու ոչ մի հնարաւորութիւն չի լինիլ, երբ այսքան խնդիրներ են ծագել:

Ընտրութիւնները շատ յաջող անցան: Շարաթ օրը ճանապարհ գրինք Վարդգէսին, այսօր էլ - իթթիհատական երեսփոխաններին: Մեծ յոյս ունեմ, որ այս շրջանում մերոնք աւելի լաւ իրենց ցոյց տան, աւելի հետեւողական կրօնակցական լինեն:

Ձերմ ողջոյններ այստեղի ընկերների կողմից:

Քո ՌՈՍՏՈՄ.

III

13)5, 1912

Սիրելի Սիմօն,

Ներքի, որ քո համակներին քիչ եմ պատասխանում եւ ուշ: Յոգնածութիւնն է, թէ չգիտեմ ինչն է պատճառը, որ գրիչը ձեռքս եմ առնում թէ չէ, աչքերս ուրիշ բան են փնտռում, որ նրանով զբաղւեմ եւ գրիչս թողնեմ:

Ձէքերդ գեռ չեն ստացել․ ինչո՞ւ չէիր գրել, թէ ինչ հասցէով են ուղարկւած: Լաւ ժամանակին է: Ուսումնական Խորհրդի գէմ (անուղղակի իմ գէմ) ազիտացիա է մղւում բիւզնէից գուրս արած ծախսերի առթի: Եւ որպէսզի այդ պակասը լրացնել չկարողանանք, «ժամի դռան» վաճառականների կողմից կատարեալ բոյկոտ է յայտարարւած: Նրանց հաշիւը շատ պարզ է: Որովհետեւ դպրոցների բարեկարգումը անպատճառ պիտի անհրաժեշտ դարձնի բիւզնէի յաւելումը, ուրեմն եւ պատճառ պիտի դառնայ իրենց խանութների վարձքի աւելանալուն, աւելի լաւ է դպրոցները պահել հին վիճակի մէջ, կամ իրենց լեզուով՝ «դպրոցները աղատել գաշնակցականների ձեռքից»:

Եթէ յարմար է քիմիակ. և ֆիզիքական գործիքները այդտեղ գրենել աւելի լաւ: Միայն ուղարկէք պրէյս-կուրանտը, որ համեմա-



ՌՈՍՏՈՄ

Հռիփսիմեան Վարժարանի բարձր դասարանի աշակերտուհիների հետ, 1913 Ս.:

տենք Գերմանիայի եւ Պետերբուրգի զինների հետ: Եթէ նոյն իսկ ալդտեղից քիչ սուղ նստի – ինչ որ չեմ կարծում, – այնուամենայնիւ ձեռնտու է ալդ ձեւը. դա կարող է աւելի քաջալերել ամերիկաւորնակ մեր երիտասարդ Կարնեցիներին: Ստացելիք 100 դոլարը կը յանձնեմ Ուսումն. Խորհրդին իրեւ ալս տարւայ նպաստ: Հաշեցէք դա արդէն արւած ծախքերի եւ տրւած պատւերների համար (մօտ 35 սակի – կենդ., բուսար., պատկերներ, քիմիակ., գործիքներ, անդամահատութեան համար դանակներ, մկրատներ ..., մարմնամարդական գործիքներ):

Լաւ եղաւ եւ արհեստանոցի նպաստը: Թէեւ նորից բացել էին եւ նոր վարպետուհի էին հրաւիրել, բայց շատ էին նեղում:

Այստեղ էր Պետրոսը, որ եկել էր Թիֆլիզից: Վիճակը լաւ էր նկարագրում: Դատապարտւածները իրենց լաւ են զգում: Մի քանիսները (վաճառականներից) դուցէ խնդիրք տան կայսեր: Համօն, Աւետիսը մտադիր են բողոք ներկայացնել Սենատին: Մնում է մրտածել բանտարկեալներին եւ նրանց ընտանիքներին օգնելու խնդրի մասին: Հարցնում էիր, թէ ի՞նչ անեն ալդտեղի Կարմիր Խաչի մասնաճիւղերը: Ահա քեզի ասպարէզ – օգնել Կոկիկասի (եւ Պարսկաստանի մասամբ) վտանգւածներին:

Սանասարեանները քննութիւնները վերջացան: Շուտով իրը թէ պիտի սկսեն դպրոցի բարեկարգութեան համար ժողովներ: Խնդրաւ չի կարում:

Մեր դպրոցները կը փակեն մի ամսից յետոյ: «Խան» չինելու ծրագիրը ընդունեց, հակառակ բոլոր խոչընդոտներին. առնւազը 200 սակի եկամուտ կաւելանայ:

«Հաջի Մուրադ»-ը ստացանք: Շնորհակալ ենք:

Քո ՌՈՍՏՈՄ.

IV

27)7, 1921

Սիրելի Սիմօն,

Մի անգամ դու հարցրել էիր, թէ ի՞նչ կարող է անել տեղիդ Կ. Խաչ ընկերութիւնը: Մի գործնական առաջարկ ունեմ: Մեր պոստի տի ժամանակ տեսայ Սերոբի երկու աղաներին, որոնք սովորում են Ս. Կարապետի դպրոցում, նոյնպէս Հրաչրի որդուն: Շատ էին խնդրում զնեւ նրանց այնպիսի մի տեղ, որ նրանց հնարաւորութիւն տայ ուսումը շարունակելու: Այդպիսին կարող էր լինել Սանասար-

եանը, բայց դու արդէն դիտես նրա վիճակը: Գէորգեան ձեռարանի մասին մտածելը ուշ է եւ իմ կարծիքով աննպատակալարմար: Մտածեցի մի բան, - տեղաւորել նրանց Արծնեանում, որը այսօր չէ վաղը պիտի միջնակարգ դառնալ: Մի խումբ կանանց կառավարկեմ իրենց վրայ առնել նրանց ապրուստի եւ այլ ծախսերի հոգը եւ եթէ յաջողւի, - բերել տալ ուրիշ նահատակ ընկերներէ որբերին՝ տղայ եւ աղջիկ, պայմանով, որ Արծնեանը աւարտելուց յետոյ վերադառնան իրենց վայրերը ուսուցչութիւն անելու:

Կարծեմ ձեր Կ. Խաչը շատ լաւ բան արած կը լինի, եթէ ամսական մի քանի ոսկի յատկացնի այդ նպատակի համար: Առաջարկիր, տես, ինչ կասեն: Սպասում եմ պատասխանի:

Պտոյտից վերադարձայ եւ քաղաքը շատ խառը տեսայ Սանասարեանի խնդրի պատճառով: Թէեւ յոյս քիչ կայ, բայց պէտք է շարունակել պայքարը:

Առհասարակ Թիւրքիոյ ընդհանուր վիճակը խառն է: Ընդհանուր գծերով նա գնում է, աւելի ճիշտ - նրան տանում են Պարսկաստանի ճանապարհով: Պայքարող սպաները թէեւ ամենալաւ ճրգտումներով օժտւած են, բայց չեն զգում, որ իրենց դործունէութիւնը տանում է դէպի պետական մարմնի քայքայումը եւ զօրեղացրնում է արտաքին միջամտութեան հնարաւորութիւնը: Վախենում եմ, որ պայքարը, եթէ սուր կերպարանք առնի, անիշխանութիւն առաջ բերի հայկական դաւառներում:

Մի երկու օրից մեկնելու եմ Պօլիս: Շատ հաւանական է, որ մընամ տեսչական պաշտօնով այս տարի եւս:

Քո ՌՈՍՏՈՄ.

V

10)10, 1912

Սիրելի Սիմօն,

Երեւի արդէն Կ. Կոմիտէն ստացած կը լինի մանրամասը տեղեկագիրը Վասպուրականի կացութեան մասին: Սարգիսը (Վանի) խոստացաւ այդ բանը անել: Մեր կողմից էլ այսուհետեւ կանոնաւոր լուրեր կը ստանաք: Հիմա մի շատ ճշտապահ ընկեր ունենք՝ Փարհատը,¹⁾ որը արդէն կարգի է ձգել մեր շրջանի նամակագրութիւնը: Առ այժմ ասեմ միայն, որ դրսի աշխարհում տարածւած սարսափի լուրերը - չափազանցութիւններ են, (եւ ես անձնապէս համոզւած եմ, որ կոտորած տեղի չի ունենալ): Մընով չեմ ուզում ասել, որ հայ ժողովուրդը կարողանալու է հանգիստ ապրել եւ դրւել իր առօրեայ աշխատանքին: Եւ ոչ միայն հայ ժողովուրդը, այլ ամբողջ ազգաբնակչութիւնը՝ հայ, թիւրք, քիւրդ՝ կարող է ընկնել

անիշխանութեան մէջ: Կառավարական մեխանիզմը վաղուց է թուրացել. աւատականները երես են առել: Առաջիկայ զարնան գուցէ վերարտադրեն Իրանի դէպքերը, նոյն խել եթէ պատերազմ ծագելու չլինի Ռուսաստանի հետ: Իսկ եթէ այդ պատերազմը ծագի, երկրի համար, մասնաւորապէս հայ ժողովրդի համար դա կը լինի մի խոչոր չարիք:

Թերթերից իմացած կը լինես Նոր Սանատարեանի բացման մասին: Գործը դուրս եկաւ հազար ու մի դժւարութիւններով: Ամենամեծ խոչընդոտը այն էր, որ դժւարանում էին խնամակալութեանը անախորժ մի քայլ արած լինել: Նխթականի պատասխանատւութիւնը գրեթէ ինձ վրայ է ծանրացել: Աղամալեանին²⁾ կը տուի ամսական ուսումնական խորհրդի կողմից միայն այն ժամանակ, երբ կողմնակի հասոյթներով գոցւած կը լինի այս տարւայ բիւզէճի բացը: Հակառակ պարագային ես պիտի տուժեմ:

Այնպէս որ Աղամալեանին վճարել կարողանալու համար պէտք է աշխատեմ, որ ամբողջ բացը գոցւի: Հանդանակութեան համար դիմել եմ զանազան տեղեր: Դիմում եմ եւ քեզ: «Հայրենիք»-ի էջերը պէտք է բանաս եւ եթէ մի 100 ոսկի հասցնես, շատ լաւ բան արած կը լինես:

Բացի այն, որ այժմ Կարինը կունենայ կանոնաւոր միջնակարգ վարժարան, խնամակալութեան անրացատրելի կարգադրութեամբ ուսումից զրկւած բոլոր աշակերտները, ա. դասարանից մինչեւ դուրդը, հնարաւորութիւն կունենան աւարտելու իրենց դասընթացը: Այդ նպատակով էր, որ սուսնճնապէս աշխատեցի, որ 5-րդ եւ 6-րդ դասարանները անպայման բացւեն: Աշակերտների մի մասը արդէն տեղ է հասել, միւս մասը ճանապարհին է:

Ի՞նչ եղաւ Ֆիդիքաւեան Cabinet, որի մասին գրել էի:

Հո.՝³⁾ 8-րդ կունենայ այս տարի կանոնաւոր մանկավարժական դասընթաց: Մեր աշակերտուհիներին պիտի միանան Աղզանէրի ընթացաւարտներից մի երկուսը:

Քո ՌՈՍՏՈՄ.

1) Սարգիս Օհանջանեան – հին յեղափոխական եւ հասարակական գործիչ: 90-ական քաղաքական աշխատում էր Ատրպատականում Նիկոլ-Գումանի եւ ուրիշների հետ: Մասնակցեց պարսկական շարժման եւ ապա՝ միւս ընկերների հետ, անցաւ Պարսկաստան: Մեռաւ 1918 թ. ձմեռը, Երեսնամում, ուր պաշտօնավարում էր ներքին գործոց նախարարութեան մէջ: 2) Տիգրան Աղամալեան – բնագիտութեան ուսուցիչ. անցել էր Կարին, ցարական հալածանքները հետեւանալով: Նախատակեց Կարսի շրջանում, քիւրդական արշաւանքների ժամանակ: 3) Հոփիսիմեան վարժարան:

VI

14) 10, 1912

Սիրելի Սրմօն,

Մի շարաթ առաջ գրել էի նորարաց Սանասարեանի մասին, խնդրելով «Հայրենիք»-ի էջերում հանդանակութիւն բանալ: Յուսով եմ, նամակս ստացած կը լինես: Լաւ կը լինէր այդ առթիւ գրել եւ «Ասպարէզ»-ին:

Մոռացել եմ գրել, որ Հրայրի որդին բերել ենք աւել արդէն: Նրան որդեգրել է Ը. Դարադեանը: Գրել ենք, որ Սերոբի տղաներին էլ ուղարկեն: Երեւի չուտով նրանք էլ կուզան: Տեղաւորելու ենք նորարաց Սանասարեանում: Աւօյի որդու ծախքը գուցէ նոյն հաշին անցկացնենք, եթէ զպրոցի միջոցները անբաւարար լինեն:

Խանդավարելու նոր քայլեր են արւում. կառավարութեան միջամբողութեանն են գլխին՝ գոյքերը փոխադրել տալու համար:

Դրութիւնը խաղաղ է: Խաղաղ է եւ գաւառներում: Միւր Մհէն ապաստանել է Երեւի Պարսկաստան: Կովկասահայերը «բանի» վրայ են: Ինչ որ զիմումներ են անում: Ասպարէզը Առաքելեաններին է մնացել! Լաւ հոտ չի փչում:

Մնում ենք միշտ այն յոյսով, որ Ռուսաստանի եւ Թիւրքիայի միջեւ պատերազմ չի ծագիլ: Բարդութիւնների սպառնալիքի տակ առաջ ենք տանում այնուամենայնիւ մեր առօրեայ աշխատանքը: Դպրոցները գեո կարգի չեն բնկել. նոր չէնք գեո պատրաստ չէ: 3-4 օրից յետոյ կը կանոնաւորեն Հոփսիմեանի, Արծնեանի դասընթացները: Կը մնայ խառը փիճակի մէջ Արծնեան մանկապարտէզը եւ նախապատրաստականները: Վարժուհանոցի (8-րդ լրաց.) աշակերտուհիները լաւ արդիւք են խոռտանում: Այս դասարանով Հրափափմեանը արդէն դառնում է միջնակարգ, 6 դասարանց (Երրորդը հաշկելով առաջին):

Սանասարեանում թոյլ են համեմատաբար հայերէնը եւ թիւրքերէնը: Վերջինիս համար ուզում ենք հրաւիրել Սերոյբէին¹⁾ բայց միջոց չկայ: Գարօն²⁾ ստանձնեց Փիղիքի եւ քիմիայի դասերը մինչեւ Աղամալեանի գալը: Ֆիլիքական դործիքները պիտի կարողանա՞նք ուղարկել:

Պոլիս ուզում էի գնել բամբուկի ձողեր մեծ բարձրութիւնների վրայով ցատկելու համար, բայց չգտայ. ինձ տւին հասցէ New-York 110 East Twenty-Third st. Եթէ տեղը ճիշտ է նշանակած, գնեցէք եւ ուղարկեցէք 2 բամբուկի ձող 8 եւ 12 ոտք երկարութեամբ: Հակա-

ուակ պարագային դիմիր հետեւեալ հասցէով՝ Narragansett Machine Company, Providence, R. I.

Եթէ մեզ խաղաղ թողնեն, այս տարի շատ բան կայ անելիք:

Քո ՌՈՍՏՈՄ.

1) Սերովրէ Նորատունկեան – քիւրքերէնի հմուտ ուսուցիչ. դաշնակցական լաւ ուժերից: 2) Արմէն Գարօ: Ս. Վ.

VII

16)12, 1912

Սիրելի Սիմօն,

Քո 26)11 նամակը ստացայ:

Տեղեկութիւնների մասին էք դանդաղանում: Ճիշտ է, շատ բան չի արւած, բայց էլի գրւած է: Նախ որ Սարգիսն է (Վանայ) գրել ձեզ մանրամասը Վասպուրականի վիճակի մասին: Երկրորդը իմ ձեռքով է գրւած: 1) Ինչպէս երեւում է իմ նամակը ուշադրութեամբ չէք կարդացել. շատ լաւ յիշում եմ, որ նամակի ընդհանուր մասից յետոյ, միւս երեսներում գրել եմ այն բոլոր կէտերը, որ ձեզ հետաքրքրում են: Եթէ նամակս չես պատուել, նորից ա՛ռ, կարգա ուշադրութեամբ:

Մեր վիճակը դարձեալ լաւ չէ. դրսի ագիտացիան, յետադէմների հրապարակ նետելը լաւ արդիւնքներ չեն խոստանում: Առ աշտմ երկիրը խաղաղ է, բայց արդպէս չի մնալ զարնան: Վասպուրականում դրութիւնը լարւած է հիմա էլ: Վայիի ուղղութիւնը կատարեյապէս միաստակար է: Իբրեւ քիւրդ նա իրերին նայում է ոչ թէ պետական, այլ քրդական տեսակէտից: Մեր կողմից մեծ պաշարիւնութիւն է հարկաւոր: Շատ ուրախացանք, երբ իմացանք, որ Արբահամը²⁾ պատրաստակամութիւն է յայտնել Վան հաստատելու, բայց վերջերս յայտնեց, որ հրաժարւում է: Վառմեանն էլ պիտի Կոմկաս անցնի ականջը բռնկելու համար:

Ռուբէնը նշանակւած է Տարօնի կրթական տեսուչ: Ժողովածու հրատարակելու միտքը Նոր Սանատարեանի օգտին շատ լաւ է, բայց միւս միջոցները աչքաթող չանես, – միակ յոյսս մնացել է գրեթէ ձեր խմբակը: Յօդւածները կը հասցնենք ժամանակին, ես էլ խոստանում եմ գրել մի բան: Լուսանկարներն էլ կուղարկւեն:

Սերովրի, Հրայրի երեխաների պէտքերը այստեղի կանանց խումբը կը հոգայ, բայց լաւ կը լինի եթէ Կարմիր Խաչը նպաստ հասցնի,

— նրանց աւելի լաւ կարելի է խնամել եւ բացի այդ, ուրիշ պէտքեր էլ կան :

Մոզական լապտերը ուղարկիր, դործածելու եղանակի հրահանգների հետ միասին :

Դպրոցական գործերը շատ լաւ կը գնային, եթէ մաղաղաների խնդիրը չլինէր : Ուսուցչական կազմը անցեալից աւելի լաւ է : Շատ բարեխիղճ եւ ձեռնհաս է Տիգրան Աղամալեանը : Աշակերտները ըզգում եւ խոստովանում են տարբերութիւնը : Քո աշակերտուհիները սրտով են սպարապում : Լրացուցիչ դաստարանը դառաւ կանոնաւոր դասարան մօտ 30 ժամ դասերով : Սկսել են արդէն դասեր տալ ըստօրին կարգերում :

Այսօր ծնողների ժողով կայ դպրոցների նդհ. վիճակի մասին խորհրդակցելու համար : «Միութիւնը»³⁾ շարունակում է առաջւայ պէս : Միայն տուգանքներն են սպառնում խեղդել : Ինձանից չափազանց դժգոհ են, որ պատճառ դարձայ քո այստեղից հեռանալուն :

Ձերմ ողջոյններով՝

Ք. ՌՈՍՏՈՄ.

1) Գաղտնի քանաքով գրած նամակ էր. սկզբում գլխի չընկայ այդ մասին եւ չբացի. յետոյ միայն կարողացայ կարդալ : 2) Ա. Գիւլիսանդանեան, որ վաւերացնում է խոստացել էր Թիւրքիա տեղափոխել, բայց ի վիճակի չեղաւ այդ խոստումը իրականացնել : 3) Երիտասարդական Միութիւնը, որ եղում էր «Յառաջ»-ի հրատարակութեան ծախքը : Ս. Վ.

VIII

23)12, 1912

Սիրելի Սիմօն,

Ներսիս կը գտնես տեղեկութիւններ երկրի կացութեան վերաբերեալ : Որը յարմար կը գտնես թերթի մէջ տպել՝ տուր : Գրողը մեր ընկեր Ս. Օհանջանեանն է : Նա կը գրէ կանոնաւորապէս, ա՛մէն չարաթ : Կարծեմ, որ դո՛հ կը մնաս նրա թղթակցութիւններից :

Ամսական նրան յատկացրէք 3-4 ոսկի, - որքան կը ներեն ձեր միջոցները :

Կուղարկի եւ ուրիշ նիւթեր :

Ք. ՌՈՍՏՈՄ.

IX

27)1, 1913 կարին.

Սիրելի Սիմօն,

1)14 թ. նամակդ ստացել եմ:

Շատ ուրախ եմ, որ վերջապէս նամակս կարողացել էք հասկանալ: Երբ քո խոստացած ընդարձակ նամակը ստացւի, նոյնպէս ընդարձակ կը պատասխանեմ: Առ այժմ ասեմ հետեւեալը:

Մեր շրջանը ուսումնական տեսակէտից գիտես, որ շատ յետ է: Առանձին կրթասիրացները կարող են մեծ գործ տեսնել: Մենք էլ ոչ մի աջակցութիւն չենք խնայել:

Հաւաւի¹⁾ մասին եթէ բան իմանամ, կը հաղորդեմ:

Վարանդեանի եւ ընկ. խիստ ուղեւորութիւնը կարող է հիասթափում առաջ բերել: Մերոնք շեղւել են մեր ճանապարհից եւ գնում են հին հոսանքի պոչից: Մեր եւ թիւրքերի համերաշխութիւնը միշտ պիտի հաստատուն մնար, բայց, դէ՛հ, ո՞ւր է մեղը:²⁾

Սնարեանին չպէտք է թողնել դայ. կարող եմ այժմեանից ասել, որ տեղը մարդ չենք գտնելու:

Բացառիկ թւի համար պատրաստուած են եւ պատրաստուած են լուսանկարներ՝ ուսուցիչների, աշակերտների (մարմնամ., բուրգեր), աշակերտուհիների, տեսարանների եւայլն...: Հետեւեալ փոստին կուղարկենք մի մասը: Պատրաստ են յօւլեաներ: Մարալը արդէն ուղարկել է մէկը: Սարգիսը գրել է իր յիշողութիւնները. այս փոստով կը ստանաս: Եթէ երկար համարես, բաց. թւի համար, առաջին մասից կարող ես հանել: Ուղարկուած է նաեւ թղթակց. Հայրենիքի համար, 2 թարգմանութիւնները՝ առանձին բրօշուրով հրատարակելու համար: Նրան հասնելիք դրամները որքան շուտ եւ որքան շատ ուղարկես, այնքան լաւ կը լինի:

Ես էլ ես ուղում մի բան պատրաստել... բայց չգիտեմ, կարող պիտի լինեմ հասցնել:

100 դուրը չստացւեց: Տաղնապի մէջ ենք: Այնուամենայնիւ Բո ՌՈՍՏՈՄ.

1) Ամերիկայի Հաւացիները որոշ գումար էին յատկացրել իրենց հայրենիքի ինքնապաշտպանութեան համար. գէ՞ճի հայքայրումն ու փոխադրութիւնը ինչ որ դժարութիւնների էր հանդիպում: Այդ մասին բանակցութիւններ էին սկսած Հ.Յ.Դ. Բիւրօի հետ: Ռատումը մասնաւոր կարեւորութիւն էր տալիս ինքնապաշտպանութեան համար կատարւած գործնական աշխատանքներին: 2) Ռատումը շատ դժգոհ էր մեր եւրոպական պրոպագանդից, որ հակաբիւրք գրգռիչ մեղով էր տարւում: Նա գտնում էր, որ կուսակցութիւնը իր բոլոր արտայայտութիւններով պէտք է կանգնած լինի Օսմանեան պետականութեան հողի վրա: Ս. Վ.

Սիրելի Սիմօն,

1) 7 թ. նամակդ ստացա՛յ 40 օր յետոյ !

Ինչպէս տեսնում ես, նամակադրութեան դործը կանոնաւորուել է : Սարգիսը կը շարունակի ամէն շաբաթ գրել :

Պ. Արսէնը անցեալ փոստով ուղարկել է մի յօդւած Սանաս. անցեալի եւ ներկայի մասին : Դժբախտաբար, չգիտեմ, ինչ է գրել :

Ուղարկւած 7 լուսանկարները ստացած կը լինես : Այսօր ուղարկում ենք դարձեալ 5 հատ : Պատրաստւում են ուրիշներն էլ :

Համերգը, յոյսով եմ, արդէն կատարուած կը լինի : Դրամը կը յատկացնեմ Աղամալեանի ամսականների հաշւին :

Աշակերտների համար ուղարկւած չէքդ ստացայ : Սանուհիները-ցըղ մէկը՝ Իհրամճեանն ամուսնացել է : Մէկ ոսկի տւի Վէմեանին, միւսը - փոքրիկ Արծնեանին : Մնում է մօտ 1 ոսկի եւ 25 դր. : Դրա համար էլ մէկին կը գտնեմ :

Մխիթարական երեւոյթ՝ առաջւան նման չէր, որ վրայ պրծնէին գրամի ձայնը լսելով : Մեծ դժւարութեամբ ընդունեցին :

Ստացայ նաեւ Ուսումնասիրացի 20 ոսկու չէկը : Առաջիկայ փոստին կը գրեմ վարչութեան :

Քիմիկոս բարեկամիդ ասա, որ իր ասած նիւթը Silicate de soude է : Դա է, որ գործ է ածւում ամենալաւ օճառների համար : Թող ստուգի եւ տեսնի, այդ չէ՞ արդեօք :

Հաւաւի գրամը ստացայ : Ճէլալեանին հրաւիրում ենք այստեղ՝ կանոնաւորելու համար այդ գործը :

Ք. ՌՈՍՏՈՄ.

12) 2, 1913

XI

Սիրելի Սիմօն,

Հին եւ նոր մեղքերս քաւում եմ նրանով, որ այս գիշեր ժամը 1-ին տուն վերադառնալով, ամբողջ գիշերը աշխատել եմ : Խնդրեմ արտագրիր եւ սրբագրիր :¹⁾ Առաջիկայ չորեքշաբթի մի փոքրիկ բան էլ կուղարկեմ՝ այս կողմերի կրթական գործին վերաբերեալ :

Կուղարկեմ նաեւ նոր լուսանկարներ, եթէ հասնեն :

Կարելի է պահանջել ժրնեւից Մարտիրոսի, Կարօյի եւ Սեթօյի լուսանկարները բացառիկ թւի մէջ դնելու համար:

Քո ՌՈՍՏՈՄ.

24)2, 1913.

1) «Նոր Սանասարեան»-ին ուիրած «Հայրենիք»-ի բացառիկ քւի համար ուղարկւած յօդւածն է ակնարկում: «Բացառիկ»-ը լռյս տեսաւ 1914 թ. սկիզբը: Ռոստոմը գրի էր առել մի դրագ Պարսկաստանի ազատագրական շարժումներից՝ Մարտիրոսի, Կարօի եւ Սեթօի մասին. Գրւածքը հրատարակւեց «Հինգ տարի առաջ» վերնագրով եւ Ականատես տոորագրութեամբ: Բացառիկի նոյն համարում տպւած են Ս. Զաւարեանի «Յիշողութիւններ ուրսունական քականներից» եւ Արմէն Գարօի «Խննսունվեցի օրերէն մէկը» յուշերը:

Ս. Վ.

XII

9)3, 1913

Սիրելի Սիմօն,

Այսօրեան փոստով ուղարկւելու է Ուս. Խորհրդի կողմից շնորհակալութեան մի գիր Կարնոյ Ուսումնասիրաց Ընկերութեան: Այնտեղ կան մի քանի տեղեկութիւններ Հովիտ. դպրոցի մասին: Կարող ես նրանցից օգտուել Բացառիկ թւի համար, եթէ միայն ուշ չէ:

Անցեալ անգամ ուղարկած յիշողութիւնս ստացած կը լինես:

Գլուխ չատ է խառ, մանաւանդ այս օրերին: Յորդամիսն է, որ ամսականներ չեն տրուում: Մարմինները նոր կազմեցին եւ նոր են կպել գործի: Ուսուցչ. ժողով որոշեց դասադուլի դիմել, եթէ մինչեւ երկուշաբթի ամսականները չտրուին: Քաղաքական, թաղական ժողովները այսօր արտակարգ ձեռքեր թափեցին եւ հազիւ հաւաքեցին մաղաղաներից 53 ոսկի ! Զգիտեմ մնացածը ինչպէս պիտի լրացնեն:

Նոր Ուսում. Խորհուրդը տաք է կպել: Բայց հաշիւները սաստիկ խճողւած են. յայտնի չէ, թէ ուր է վերջանում թաղականինը, ուր է սկսում ուսումնականինը, ինչպէ՛ս պիտի ճշտել Նոր Սանասարեանին ծախքերը, միւս դպրոցների այս տարւայ եւ անցեալ տարւայ հաշիւները: Սրան աւելացրու իմ եւ Ուսումնական Խորհրդի միջեւ համաձայնութիւնը Աղամարեանի ամսականների մասին: Այս բոլորը աչքի առաջ ունենալով, լաւ կը լինէր, եթէ գալիք նպաստները չուղարկւէին բացառապէս Նոր Սանասարեանի անունով, այլ ընդհանրապէս դպրոցների: Իսկ եթէ այդ ձեւականօրէն անյարմար

կը լինի, եղած յայտարարութիւնները պատճառով, ուղարկել «Նոր – Սանասարեանի պէտքերի համար», բայց բաշխման կերպը թողնել, եթէ խորթ չթւի այս խօսքը, – իմ հայեցողութեան:

Գուցէ կարելի լինի կազմակերպ հանդէսի հասոյթը յատկացնել ընդհանրապէս դպրոցներու պէտքերին:

Պատերազմը սուղ նստեց մեր վրա: Ստիպւած ենք սեղմւել ամէն կողմից: Նեղ պարագաները բնականօրէն անդրադարձել են նրանց վրայ, որոնք սովոր են եղել յաջողութիւն դտնել՝ աննշան ճիւղեր թափելով: Բայց սրա հակառակ՝ ուրիշների մէջ էլ նկատուած է եռանդի կրկնապատկում: Նուա՛ղ նշանակութիւն չունի նաեւ արդի քաղաքական տարտամութիւնը: Հին ուղիով դնալ չի լինում. նորի մէջ տէրը մենք չենք կարող լինել:

Սպասենք, տեսնենք:

Քո ՌՈՍՏՈՄ.

XIII

Սերեւի Սիմօն,

Թէ Աստուած սիրես, բացառիկ համարը ամառան չձգես.¹⁾ ամէն կերպ աշխատիր, որ մինչեւ արձակուրդները (մինչեւ Յունիսի ըսկիզբը) անպատճառ ստացւեն փողերը: Թէ չէ խայտառակ վիճակ կը ստեղծւի: Ես նոյնիսկ մտադիր էի խնդրելու յանձնախմբին, որ ապագայ վիճակահանութեան հաշին էլ մի բան այս տարի հասցնէիք: Ձեռ կարող երեւակայել, թէ ինչ է այս տարւայ մեր դրութիւնը:

Ինչ ուզում ես, կանեմ. նոր յօդւած կ'ուղարկեմ, լաւամկարս էլ կ'ուղարկեմ, միայն թէ բացառիկ թիւը չ'ուշանայ:

Միւս խնդիրների մասին յետոյ կը գրեմ: Շտապում եմ դպրոց. փոքրիկները այսօր հանդէս ունեն: Ասպարէզը հիմա նրանցն է:

Քո ՌՈՍՏՈՄ.

7)4, 1913.

1) «Նոր Սանասարեան»-ին նւիրած բացառիկ պէտք է լոյս տեսնէր 1913 թ. գարնանը, բայց խմբագրութեան քափած բոլոր քանֆերն ապարդիւն անցան՝ ժամանակին մէջ ստանալու եամար: Հագիւ կարելի եղաւ լոյս ընծայել 1914թ. սկիզբը:

XIV

Սիրելի Սիմօն,

Ուղարկում եմ Գարօյի¹⁾ մի պատմածքը: Աղամանդ է, որ պէտք է յղկել, բրիլիանա դարձնել:

Կարծեմ, որ արդէն առատ նիւթ ունիս: Տպագրութիւնը չուշացնես:

Քո ՌՈՍՏՈՄ.

24) 4, 1913.

1) Արմէն Գարօի գրի առած մէկ դրագը Բանկ Օքսֆորդի օրերից: Հրատարակւած է «Նոր Սանասարեան»-ին նւիրած բացառիկ «Հայրենիք»-ում: Ս.Վ.

XV

26) 4, 1913

Սիրելի Սիմօն,

Այսօր ուղարկում եմ դարձեալ 5 պատկեր:*) Կարծեմ, որ բաւական է: Էլ պակաս բան չես ունենալ:

Սպասում եմ, ուրեմն, դրամի:

Այսօր լսարան ունեցանք արտագաղթի առթիւ: Յորդորները թէեւ չեն օգնիլ, բայց եւ այնպէս դուցէ քիչ մեղմացնեն հոսանքը:

Կարող է նշանակութիւն ունենալ այդտեղի պանդուխտների վիճակի նկարագրութիւնը: Կարո՞ղ ես լողդու փաստեր տալ, մանաւանդ անդործութեան եւ դրանից առաջ եկած աղէտների մասին, կարեւոր փաստեր նաեւ իսլամ պանդուխտների վերաբերեալ:

Ընկերներին յայտնիր, որ իրենց արտայայտած փափաղի համաձայն դործ առաջարկեցինք Թովմասին,¹⁾ բայց նա, հակառակ կրկնակի մեր ղեմումներին, միշտ ձգձգել է եւ մինչեւ հիմա ոչ մի դործի չի կպել: Վերջերս խնդրեցինք զալ այստեղ ձեր վերջին յանձնարարութեան համար, բայց չեկաւ:

Այնուամենայնիւ ուրիշի միջոցով հնարաւոր ենք տեսնում դործը զլուխ բերել:

Սարգսի դրամը չուշացնես: Կարող է պատահել, որ չուտով հե-

*) Այս ամիս սրանով ուղարկւած է մօտ 10 հատ:

ռանայ մեր քաղաքից: Մտադրութիւն կայ Կովկաս անցնելու: Ես էլ յանդգնութիւն ունեմ այդ մասին մտածելու:

Գարօյի դրութիւնը ստացած կը լինես: Լաւ պէտք է կոկես, նիւթը շատ լաւ է:

Քո ՌՈՍՏՈՄ:

1) Թովմաս ձէլալեան – Ամերիկայի գործօն դաշնակցականներից, որ վերադարձել էր իր ծննդավայրը՝ Բալու երկրում աշխատելու համար: Զոհ գնաց ընդհանուր եղիւնքին:

Ս. Վ.

XVI

22)5, 1913

Սիրելի Սիմօն,

Մի շարաթ առաջ դրած նամակս ստացած կը լինես: Անցեալ փոստին ստացայ 8)5 նամակդ:

Լաւ չեղաւ, ուր ուշացաւ «Բացառիկը»: Ամբողջ յոյսս նրա վրայ էր: Դրա պատճառով տակն ու վրայ են լինում Ուսուցչ. ամբողջ կազմի ամսականները: Ստիպւած կը լինեմ պարտք անել: Բայց ո՞ւր դիմեմ:

Քանի որ ուշանում է, որքա՞ն կուզենայի աչքի անցնել իմ յօդւածը: Յամենայն դէպս վերջին մասը եթէ հանես, վատ չի լինիլ:¹⁾

Մեր վիճակը այնքան էլ դէժ չէ, ինչպէս ներկայացնում են: Մի տեսակ սպասողական դրութիւն է. «Ազգային» դործերը կանգ են առել: Ներքին ստիմուլ չկայ: Ամէն ինչ դնում է ինտրիգիստի, եթէ միայն գնում է: Կարծում եմ, որ առաջիկայ տարին սթափում կը լինի:

Փիլիսոփայ այս փոստով պիտի դրէր: Կազմակերպական կեանքից տեղեկութիւններ տալը նրա վրայ կը դնենք:

Կովկասում երկու տեսակ հոսանք է նկատուում: Որոշ մասի յոյսը Ռուս Կառավարութեան միջամտութեան վրայ է, եւ այդ պատճառով ոչինչ չի ուզում անել: Աւելի ճիշտն ասած՝ յոյսը կառավարութեան վրայ է դնում, իր կողմից ոչ մի բան չանելու համար: Բայց կան եւ այնպիսիները, որոնք լուրջ են կալում գործին:

Լաւ է, որ Սնարեանը մնաց: Խօսւում էր ձէմիլի մասին. կարծեմ դրել էի, որ նա Ամերիկայի համար շատ օգտակար կարող է լինել, միայն թէ Ամերիկան նրա համար աղետաբեր կը լինի: Նրա բնաւորութեան մէջ կայ թեթեւ, մաղերեսային վերաբերում դէպի

աշխատանքը: Իսկ ձեր դասախոսութիւնները, ճառերը, ժողովները բոլորովին կը մեռցնեն նրա մէջ լուրջ աշխատանքի ոգին:

Սիւնիի մասին ես գրած եղել Պոլիս:2)

Ռուբէնը մեզ մօտ է այժմ: Գուցէ շուտով դէպի Մուշ գնայ: Ճէլալեանը յայտնել է, որ շուտով այստեղ կը լինի:

Քո ՌՈՍՏՈՄ.

1) «Նոր-Սանասարեան»-ին նկրած Բացառիկում տպած յօդածի վերջին մասում խորհրդածութիւններ կային դաշնակցական ընկերականութեան մասին. տպեց անփութիւն: 2) Խօսքը երաժշտագէտ Գ. Սիւնիի մասին է: 1911 թ. նա արտաքին էր Դաշնակցութեան շարքերից անբարոյական վարք ու բարբի պատճառով: Նրա դէմ եղած ամբաստանութիւնների քննութիւնը Բիւրօի կողմից ինձ էր յանձնուած: Պոլսէն կարին անցնելիս ես երկու շաբաթ գրադեցի այդ գործով: Իմ ներկայացրած քննական նիւթի վրա հիմնւած՝ դատական մարմինը նրան վտարեց կուսակցութիւնից: Այնուհետեւ, մի քանի տարի, Սիւնիի իրեն համեմատաբար լաւ պահեց, եւ իր քաջամտագին ազաւանքների վրա՝ ես քուլութիւնն ունեցայ դիմելու Բիւրօին, որ պատիժը բաւ համարի եւ նորից հնարաւորութիւն տրի նրան աշխատելու կուսակցութեան մէջ: Բարեբախտաբար, Բիւրօն ընդառաջ չգնաց իմ դիմումին: Հետագայ դէպքերը ցոյց տւին, որ նա արժանի չէր նման ներողամտութեան. Սիւնիի գործակալ դարձաւ Կարնայ ռուս հիւպատոսի ձեռքին, դաւեց իր ընկերների դէմ, գեղծումներ կատարեց եւ նորից ու նորից Դաշնակցութեան դուռը ապարդիւն բախելուց յետոյ՝ գնաց ընկաւ բոլշեւիկների գիրկը: Ս. Վ.

XVII

11)8, 1913

Սիրելի Սիմօն,

Վաղուց է քեզ ոչինչ չեմ գրել: Ասենք քեզանից էլ բան չեմ ըստացել:

Մեր ճանապարհորդութիւնը այս տարի աւելի յաջող անցաւ: Ափսոս միայն, որ Ս. Կարապետի եւ Աշտիշատի հանդէսներին չհասան Կովկասի մեր ընկերները: Նրանք ուշ հասան, բայց եւ այնպէս դո՛ւ մնացին իրենց տեսած ու լսածով:

Մի ժողովի մէջ, ուր ներկայ էին զանազան դաւաճներից ընկերներ, որոշեց ամէն տարի Վարդապետի օրը համախմբուել Ս. Կարապետում: Պիտի աշխատենք վերականգնել Նաւասարդեան տօները խաղերով, մրցումներով: Եթէ ուրիշ տեղեր էլ մարմնամարզական խմբեր կազմեն եւ ներկայանան հանդէսին, տօնը առանձին փայլ կը ստանայ:

Մտադրութիւն կայ նաեւ այդ օրերը կազմել ուսուցչական համագումարներ՝ ընդհանուր մի ուղղութիւն տալու համար դպրոցական գործին:

Բացի այդ, եթէ հնարաւոր լինի, պիտի կազմենք ընկերական հաւաքոյթներ՝ իրարու լաւ հասկանալու համար:

Յոյս ունենք առաջիկայ տարին ունենալ մեծ բազմութիւն կովկասից եւ ուրիշ վայրերից: Գուցէ Պօլսից էլ ուղենան դալ...:¹)

Այժմ այստեղ ենք: Կովկասի ընկերները (Նիկ. Աղբալեան, Սիրաք Գրիգորեան, Արշակ Ջամ., Արտ. Բաբալեան) կը մնան մինչեւ օգ. 25: Տեղի պիտի ունենայ առաջին ընդհ. ժողովը երկրի մէջ: Կաշխատենք, որ դա լինի պատմական մի ժողով: Միայն թէ պատգամաւորները ժամանակին հասնէին:

Ընկերները նպատակադրմար են համարում, որ այս տարի Պոլիս փոխադրւեմ: Տեսնենք, թէ ինչ կը լինի վերջնական որոշումը: Հաւանական է, որ փոխադրւեմ: Այդ պարագային Սիմօն պէտք է որ այստեղ մնայ:

Նոր-Սանասարեանը կը բացւի: Զգիտեմ, հարցրել եմ քեզ արդեօք 1,100 դոլ. նպատի մասին: Այդ գումարին ապաւինելով է, որ մեզ վրայ ենք առել դպրոցի պահպանութիւնը, նախկին բիւրճէով: Հիմա վախում եմ, չլինի թէ որեւէ արգելք առաջ դայ: Թէ Աստուած սիրես, — նամակով ուշ կը լինի, — հեռագրով յայտնիր՝ կարելի է արդեօք հաստատապէս յոյս դնել: Եթէ այո կամ ոչ, խնդրեմ հեռագրես՝ միայն 3 խօսքով՝

Erzeroum, Rostomian, oui կամ non.

Բացառիկը ի՞նչ վիճակի մէջ է: Եթէ ուշ չլինէր, նոր նիւթեր կուղարկէի:

Մեր «բանտարկութեան»²) մասին արդէն լսած կը լինես: Չար դիտաւորութիւն չկար. խամութեան արդիւնք էր: Քաղաք բերին քաղաքավարի կերպով: Ժանդարմերի մէջ պահեցին մօտ 2 ժամ, մինչեւ միւթէսարեֆի դալը: Սա եկաւ եւ ցաւ յայտնելով թիւրիմացութեան մասին՝ ազատ արձակեց: Հետեւեալ օրը եկաւ ինքը առաջնորդարան մեզ այցելութիւն տալու:

Ժողովրդի վիճակը ընդհանրապէս լաւ է: Տնտեսականը աւելի բարձրացել է: Ապահովութիւն կայ այն վայրերում, ուր ժողովրդի մօտ կան ինքնապաշտպանութեան միջոցներ: Մնունդը, մաքրութիւնը աչքի է զարնում: Բաւական է ասել, որ ոջիւնների թիւը զգալապէս պակասել է: Ոջիւր մեր երկրում, իմ կարծիքով, պիտի նկատել ամենալաւ չափանիշը տնտեսութեան բարեօքման:

Աշակերտները, թուով 12 հոգի, աւելի հասակաւոր քան անցեալ տարի, յաջողութեամբ դուրս եկան: Եղաւ օր, որ ամբողջ 13 ժամ քալեցինք:

Ախորժակը չդրդուեց:

Քո ՌՈՍՏՈՄ:

Սպասելու ենք հեռագրիդ:

1) Իսկապէս ցայց է տալիս Ռոստոմի քերականութիւնը: Առհասարակ, նա չափազանց դժգոհ էր «պոլսեցիներին» եւ «երոպացիներին» երկրի հանդէպ ցայց տւած վերաբերումից: 1914 թ. ընդհանուր ժողովի ժամանակ նա բռնուն վրդովու՝ մով էր խօսում այն ընկերների մասին, որոնք, վախճալով երկրի կեանքի պայմանները, նոյնիսկ մերժել էին ընդհանուր ժողովի գալ: 2) Ռոստոմի պատմած միջադէպը արտասահմանում չափազանցւած ձեւերով էր ներկայացւած եւ քաղաքական գոյն էր ստացած: Աւելի հաւանական է, սակայն, որ բանտարկուիւնը «քիւրքիմացուքեան» արդիւնք չէր, այլ որոշ նպատակ էր հետապնդում: Ս. Վ.

XVIII

14)8, 1913

Սիրելի Սիմօն,

Շնորհաւորում եմ «Հայրենիք»-ի երկօրեայ դառնալը: Ուրեմն, դրանով որոշւած է երեւում եւ մի ուրիշ բան.—քո այդտեղ մնալը:

Վաղը չէ միւս օրը մեր քարւանդ ճանապարհ է ընկնում դէպի Ս. Կարապետ: 1,500 ամեակի տօնը շատ անշուք կանցնի: Մեր սպասածը չեղաւ: Ծովեղբերքից, Պօլսից մարդ չչարժւեց: Թիֆլիզից աւելի մեծ յոյս ունէի — դրել էին, որ պատրաստւում են մեծ խմբով՝ ճանապարհ ընկնել, բայց այդտեղից էլ ձայն դուրս չեկաւ: Երեւի դարձեալ մենք ու մենք ենք մնալու: Աշխատեցի հրապուրել հեռուորներին հին ու նոր պատմական յիշատակարաններով: Հայաստանի ֆառուայի աչքի ընկնող ներկայացուցիչներին՝ ոջիւնների մասին, ի հարկէ, ձայն ծալտուն չհանեցի, բայց ոչինչ, ինչպէս երեւում է, չօգնեց:

Երեւի մի տարի եւս պիտի մնամ Նոր-Սանասարեանի գոյութիւնը շարունակելու համար:

Իայց, յանկարծ, խայտառակ կացութիւն չստեղծւի. 1,100 դուլարի խնդիրը ապահով է: Եթէ ոչ, թէ Աստուած սիրես, չուտով յայտնիր, թէկուզ հեռագրով, որ բեռի տակ չմտնեմ: Այս տարի առանց այն էլ հոգիս ելաւ: Երեք խօսքով կարելի է յայտնել՝ Erze-roum, Rostomian, oui ou non.

Ի միջի ալլոց, փորձեր եղա՞ն Ֆրէզնոյի կողմը գտնուող Կարնե-
ցիներին կապելու: Զե՞ր կարելի ալլ մասին դիմել «Աստարէզ»-ին եւ
տեղական դաշնակցական մարմիններին:

Տեղեկագիրը երբ պատրաստ լինի, մի օրինակ կողարկեմ ձեր
դպրոցասիրացին:

Քո ՌՈՍՏՈՄ.

XIX

20)10, 1913

Սիրելի Սիմօն,

Նամակդ ձեռքիս տակ չէ, որ բոլոր կէտերին պատասխանեմ:

Ծիշտն ասաց, չեմ յիշում, որ նախորդ նամակներդ մէջ բան
ես գրած եղել գալուդ մասին: Եթէ կարծիք չեմ յայտնել, դրա
պատճառը յամենայն դէպս, այն չէ, որ խոյս եմ տուել հարցիդ պա-
տասխանելուց: Ընդհակառակը կասեմ, — իմ կարծիքով՝ քո ալլ
կողմերն անցնելը անհրաժեշտութիւն է: Գործող ուժերը աւելի քան
անբաւարար են: Եղածների մի մասը քայքայւած էութիւններ են,
կարօտ հանգստի:

Մասնաւորապէս ինձ գալով՝ անկարելի բան է, որ այլեւս Կարին
մնամ: Արդէն ժողովում դրւած եւ որոշւած էր, որ հեռանամ Պօլիս
կամ Ժընև: Միայն ուժերի չափազանց անբաւարարութեան խնդիրն
էր, որ ստիպեց ինձ մի տարի եւս մնալ: Սիմօնն էլ չկայ!... Աչքի
սուշ ունեցիր, որ ընկերների մի մասը պնդում է, որ տարւայ կէ-
սից թողնեմ Կարինը եւ տեղափոխեմ Պօլիս:

Յայտնիր ընկերներին երկրի պահանջի մասին. գտէք մարդիկ՝
տեղիդ գործերը վարելու համար. վեարարձիր Եւրոպա, հանգստա-
ցիր, որքան հարկ կը համարես եւ ապա քայլերդ ուղղիր դէպի մեր
կողմերը:

Ընկերները շատ ուրախացան իմանալով մտադրութեանդ մասին.
կարծեմ քեզ պիտի դրեն: Պարզ բան է, որ գործելավայրդ յետոյ
կորուչի:

Կ. Կոմիտէին պիտի գրէինք: Եթէ չկարողացայ ես ինքս անել,
Փիլոսը անպատճառ կը գրի: Մօտ մի ամիս է, ինչ բացակայ է: Գը-
նացել էր մեր կողմից պատգամաւոր Սիմօնի թաղմանը:

Մասնաւորապէս պիտի խնդրէի ընկերներին (քղեցի)՝ վերապա-
հութեամբ ընդունել Քղիից եկած լուրերը: Ինչ որ անախորժ բաներ
են կատարուած: Երեւի նրանց հետ ստիպւած լինենք յարաբերու-

Թիւններս խզել, մինչեւ չիւրացնեն կաղմակերպութեան ոգին եւ մինչեւ չթողնեն ծուռ ու մուռ ճանապարհները :

Ռուբէնից լաւ լուրեր ենք ստանում : Գոհ է իր վայրից :

Մեզ գրադեցնող խնդիրը - ընտրութիւններն են :

«Բացառիկը» չտարեցրու :

Քո ՌՈՍՏՈՄ .

XX

913-ի վերջը .

Սիրելի Սիմօն ,

Ամէն փոստի ստասում եմ դրամի . - չէ՞ որ ներկայացումից անմիջապէս յետոյ պիտի դրամները ուղարկէիր , - բայց ոչ փող կայ , ոչ էլ նամակ :

Սարգիսն էլ չստացաւ իր հօնօրարը : Որովհետեւ ստիպւած էր դնալու , պարտք արեց եւ այնպէս դնաց :

Նրանից յետոյ նամակագրութիւնը եւ թղթակցութիւնը կը շարունակի Փիլոսոփ : Այնպէս արտա , որ ամսական դոնէ 3 լ . բաժին հասնի նրան :

Այժմ նա էրզնկա է : Գնացել է ուսմբի պայթման պարագաները քննելու եւ անմեղ բանտարկեալներին տղատելու մասին հարկ եղած զիմումներն անելու : Ինչպէս երէկ իմացանք նրա հեռագրից , 10-ը հոգի ազատւած են . մնացել են բանտում 3 հոգի :

Ռուբէնը եկաւ : Առ այժմ մեկ մօտ կը մնայ : Յետոյ հաւանա-կան է , Մուշ դնայ :

Ի՞նչ եղաւ բացառիկը : Տարին վերջանում է : Տպագրութիւնը սկսեց թէ ոչ : Չես կարող երեւակայել , թէ որքան ծանր անցաւ այս տարին :

Թրքական «Գարունը» իր նշաններն է սկսում ցոյց տալ : Ժանդարմներ եկան , մօտ 400 հոգի , կէսը Վանի , կէսը Բաղէշի վերա-յէթների համար : Այդ երկու նահանգների վալիները հռանդուն եւ աշխատող մարզիկ են : Այստեղով անցան նաեւ Իթթիհադի պատե-րակները : Խոստումներ չատ են արւում , բայց այս անգամ յոյս կայ , որ աւելի իրադրծւեն :

Ռուսաստանից լաւ լուրեր են գալիս : Լըթինի մտաւոր խանդա-րումը բաւական դեր է խաղում : Սկսել են թեթեւցնել մերոնց վիճա-կը : 20 տարւայ աքսորը իջեցրել են 1 տարու : Համօյի դաժանակիր աշխատանքը փոխել են աքսորի : Արտասահմանում ապաստանածնե-րին թէեւ դատի կենթարկեն , բայց թեթեւ կը վերաբերւեն :

Թողմանը լուր է ուղարկել, որ երկու շաբաթից այստեղ կը լինի: Մեր հեռագիրը եւ նամակը ստացած չի եղել: Յուսով ենք ներազալով, այնտեղի խնդիրները կարգի բերել:

Ք. ՌՈՍՏՈՄ.

XXI

5)9, 1914

Սիրելի Սիմօն,

Շնորհաւոր Նոր-Տարի: Բաց-գիրդ ստացայ, շնորհակալ եմ:

Շնորհակալութիւններ նաեւ Արտաշէսի,¹⁾ Փիլոսի եւ քո «սանամարդ» տիկ. Վարսենիկի²⁾ կողմից, որոնք այս բոլէիս ներկայ չեն:

Այս գիշեր մի լաւ երազ տեսայ. «Բացառիկ»-ը արդէն հրատարակւել էր, խոստացւած 100 ոսկին ստացել էի՝ հին պարտքերը վճարել, նոր պէտքերին զոհացում տւել: Ինչ լաւ բան է եղել երազը:

Ք. ՌՈՍՏՈՄ.

1) Արտաշէս Գաւափեան — ուսուցիչ, Կարնոյ աշխի բնկնող դաշնակցականներին, «Յառաջ»-ի մերձաւոր աշխատակից: Զոհ գնաց ընդհանուր եղեռնին: 2) Փիլոսի կիներ:

Ս. Վ.

XXII

Սիրելի Սիմօն,

Վաղուց է քեզ չեմ գրել, բայց դրա փոխարէն ուրիշները բոլ բոլ տեղեկութիւններ են տւել ձեզ: Կարծմ ալիւս դանդաւոր տեղիք չի մնալ:

Մի քանի, եթէ կուզես, անձնական խնդիրների մասին կուզէի գրել այսօր:

1) Ի՞նչ եղաւ «Բացառիկը»: Զգիտե՞ս, որ բաւական լուրջ պատճառներ ունեմ անհամբեր սպասելու նրա երեւալու յայտարարութեան:

2) Մի անգամ գրել էիր, որ տեղիդ «Կարմիր իշաչի մարմինները կարող են նպաստ տալ մեր նահատակների զաւակների կրթութեան զործին: Կարելի՞ է այս տարի յոյս ունենալ: Քեզ յայտնի է, որ Սերոբի երկու տղաները եւ Հրայրի մի որդին բերել ենք տւել այստեղ: Անցեալ տարի ծախսի դրամ կարողացանք տեղական միջոցներով հայթայթել, որովհետեւ Հրայրի որդուն որդեգրել է ամբողջո-

վին մեր ընկերներէց մէկը, իսկ Սերորի որդիները ապրում էին Տուրքախի տանը: Մեզ վրայ մնում էր միայն վերջիններին հաղուստի, կօշիկի, զրենական պիտոյքների եւ այլ մանր - մունր ծախսերը: Բայց ինչպէս գիտես, Տուրքախը մեռել է, եւ այժմ նրա որդիների հոգան էլ ծանր խնդիր է: Սերորի որդիներին թողել ենք Տուրքախենց տանը, բայց որոշել ենք վճարել ամսական (դարնանից սկսած արդէն վճարում ենք) 3-4 ոսկի ապրուստի ծախսի համար:

Պիտի խնդրէինք, որ «Կարմիր Խաչը» դէթ 30 ոսկու նպաստ յատկացնի այս տարի: Եթէ հարկաւոր է, - պաշտօնապէս դիմենք մարմնի կողմից:

Եթէ հնարաւոր լինէր աւելի մեծ գումար յատկացնել, կարող էր լինէինք նպաստ տալ 3 սասունցի որը աշակերտներին էլ (2-ը Սանասարեանի 5 եւ մէկը 4-րդ կարգի): Դրանցից մէկի հայրը ըստ պանել է Սերորի հետ: Անցեալ տարի նրանց պահում էինք Աղատամարտի Փօնգի հաշին: Հիմա էլ տալիս եմ «Բացառիկի» հասոյթի հաշին:


3) Նամակս ստանալուց անմիջապէս փոխադրիր Փիլոսի հասանելիք գումարը, որ իրօք 5-6 ոսկու հասած կը լինի: Նա չափազանց շատ պէտք ունի:

Երբ այս տեսակ զրամական հաշիւներ վերջացած կը լինեն, կը գրեմ եւ էլ ուրիշ նիւթերի մասին:

• Այս տարի գլուխս աւելի է խառը: Եթէ քո non-ը փոխէր oui-ի, որքա՞ն հանգիստ կը լինէի: Երեւակայիր, դեռ մինչեւ հիմա ուսուցիչները չեն պայմանաւորւած բոլորը (միայն 42 հոգի): Ուսումն. Խորհուրդը հանեց մօտ 500 ոսկի բաց: Նոր-Սանասարեանը կարկառանով պիտի առաջ երթայ:*)

Այս բոլորի վրայ աւելցուր եւ այն, որ չէնք էլ չունենք:

Քո ՌՈՍՏՈՄ.



*) Գուցէ ստիպւած լինես վիճակահանութեան կամ հանդէսների մասին մտածել: Ի՞նչ քանի պիտի գործադրի «Ազատ. Կար.» 1,100 դոլարը: